Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-748-20.12.2023,18.03.2024-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» 1998 թվականի նոյեմբերի 11-ի ՀՕ-261 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 7. Հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական ու ազգային խտրականության, ռազմական նպատակներով օգտագործման արգելումը

1. Հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում արգելվում է քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական ու ազգային խտրականությունը:

2. Արգելվում է զինված ընդհարման կամ պատերազմական գործողությունների ժամանակ հուշարձանների, դրանց տարածքի եւ պահպանության գոտու օգտագործումն ու փոփոխումն այնպիսի նպատակներով, որոնք կարող են հանգեցնել հուշարձանի ավերմանը կամ վնասվելուն:»

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետում «վերականգնման» բառից հետո լրացնել «, տեղափոխման, փոփոխման» բառերը:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի.

1) 1-ին մասի բ) կետում «վերականգնման» բառից հետո լրացնել «, տեղափոխման, փոփոխման» բառերը:

2) 1-ին մասում լրացնել նոր՝ է3) կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«է3) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման, տեղափոխման, փոփոխման եւ տարածքի բարեկարգման գիտանախագծային փաստաթղթերի կազմման եւ հնագիտական պեղումների իրականացման վերաբերյալ կողմնորոշիչ գները.»

3) 1-ին մասի ժգ) կետում «վերականգնման,» բառից հետո լրացնել «տեղափոխման, փոփոխման,» բառերը:

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հանրապետական եւ տեղական նշանակության հուշարձանի ամբողջական կամ մասնակի տեղափոխումը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքում: Բացառություն են կազմում մոնումենտալ արվեստի հուշարձանները կամ ճարտարապետական փոքր ձեւերը, որոնց տեղափոխումը հրամայական է եւ բխում է հուշարձանի նյութական պահպանության լավագույն շահից: Բոլոր դեպքերում լիազոր մարմինը անվտանգության անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի պատշաճ վայրում հուշարձանի ապամոնտաժման, տեղափոխման եւ վերականգնման համար: Հանրապետական եւ տեղական նշանակության հուշարձանի տեղափոխումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվությամբ՝ լիազորված մարմնի դրական եզրակացության հիման վրա»:

Հոդված 5. Օրենքի 41-րդ հոդվածի.

1) վերնագրում եւ ամբողջ հոդվածում «զբոսաշրջիկություն» բառը փոխարինել «զբոսաշրջություն» բառի համապատասխան հոլովաձեւով:

2) 2-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«Հուշարձանները զբոսաշրջության նպատակով օգտագործելու դեպքում զբոսաշրջային ծառայություններ մատուցող կազմակերպությունները կամ անձինք համապատասխան պայմանագրեր են կնքում սեփականատերերի հետ»:

Հոդված 6. Օրենքի 44-րդ հոդվածում «վերականգնման» բառից հետո լրացնել «,տեղափոխման, փոփոխման» բառերը:

Հոդված 7. *Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթ*

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող է3) կետով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 7-ամսյա ժամկետում:

Լրամշակված

Պ-748-20.12.2023-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պատմության ~~և~~ եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ~~և~~ եւ -օգտագործման մասին» 1998 թվականի նոյեմբերի 11-ի ՀՕ-261 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը ~~վերա~~շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 7. Հուշարձանների պահպանության ~~և~~ եւ օգտագործման արգելումը քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական, ազգային խտրականության ~~և~~ եւ- ռազմական նպատակներով**

1. Արգելվում է հուշարձանների պահպանությունը ~~և~~ եւ- օգտագործումը քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական, էթնիկ ~~և~~ եւ ազգային խտրականության նպատակներով:

2. Արգելվում է զինված ընդհարման կամ պատերազմական գործողությունների ժամանակ հուշարձանների, դրանց ~~անմիջական շրջակայքի~~ տարածքի ~~և~~ եւ- պահպանության գոտու օգտագործումն ու ~~վերափոխումն~~ փոփոխումն-այնպիսի նպատակներով, որոնք կարող են հանգեցնել հուշարձանի ավերմանը կամ վնասվելուն:»

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետում «վերականգնման» բառից հետո լրացնել «, տեղափոխման, փոփոխման» բառերը:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի.

1) **1-ին մասի** բ) կետում «վերականգնման» բառից հետո լրացնել «, տեղափոխման, փոփոխման» բառերը:
2) **1-ին մասում լրացնել նոր՝** է3)~~, է4) և է5~~) կետ~~ներ~~՝ հետևյալ բովանդակությամբ.

«**է3**) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող պատմության եւ ~~և~~ մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման, տեղափոխման, փոփոխման եւ ~~և~~ տարածքի բարեկարգման գիտանախագծային փաստաթղթերի կազմման եւ ~~և~~ հնագիտական պեղումների իրականացման վերաբերյալ կողմնորոշիչ գները.»

~~**է4**) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա հնագույն, հին, միջնադարյան և նոր ժամանակաշրջանների պատմության և մշակույթի հուշարձանների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով պատկանող և անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված պատմության և մշակույթի հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման և տեղափոխման, ինչպես նաև հատուկ պահպանվող Պատմական և մշակութային հողերում շինարարության իրականացման համար ճարտարապետահատակագծային առաջադրանքի ձևը.~~

~~**է5**) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա հնագույն, հին, միջնադարյան և նոր ժամանակաշրջանների պատմության և մշակույթի հուշարձանների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով պատկանող և~~

~~անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված պատմության և մշակույթի հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման և տեղափոխման, ինչպես նաև հատուկ պահպանվող Պատմական և մշակութային հողերում շինարարության թույլտվության ձևը.»~~

~~**3)1-ին մասը լրացնել նոր «ժա1) կետով** հետևյալ բովանդակությամբ.~~

~~**«ժա1)** սահմանված կարգով տրամադրում է Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա հնագույն, հին և միջնադարյան ժամանակաշրջանների պատմության և մշակույթի հուշարձանների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով պատկանող և անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված պատմության և մշակույթի հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման և տեղափոխման, ինչպես նաև հատուկ պահպանվող Պատմական և մշակութային հողերում քաղաքաշինական գործունեության իրականացման համար ճարտարապետահատակագծային առաջադրանքներն ու շինարարության թույլտվությունները.»~~

~~4)~~**3)____1-ին մասի** ժգ) կետում «վերականգնման,» բառից հետո լրացնել «տեղափոխման, փոփոխման,» բառերը:

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը ~~վերա~~շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հանրապետական եւ ~~և~~ տեղական նշանակության հուշարձանի ամբողջական կամ մասնակի տեղափոխումը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքում: Բացառություն են կազմում մոնումենտալ արվեստի հուշարձանները կամ ճարտարապետական փոքր ձևերը, որոնց տեղափոխումը հրամայական է եւ ~~և~~ բխում է հուշարձանի նյութական պահպանության լավագույն շահից: Բոլոր դեպքերում լիազոր մարմինը

անվտանգության անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի պատշաճ վայրում հուշարձանի ապամոնտաժման, տեղափոխման եւ ~~և~~ վերականգնման համար: Հանրապետական եւ ~~և~~ տեղական նշանակության հուշարձանի տեղափոխումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվությամբ՝ լիազորված մարմնի դրական եզրակացության հիման վրա»:

Հոդված 5. Օրենքի 41-րդ հոդվածի.

1) վերնագրում եւ ~~և~~ ամբողջ հոդվածում «զբոսաշրջիկություն» բառը փոխարինել «զբոսաշրջություն» բառի համապատասխան հոլովաձևով:
2) 2-րդ պարբերությունը ~~վերա~~շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Հուշարձանները զբոսաշրջության նպատակով օգտագործելու դեպքում զբոսաշրջային ծառայություններ մատուցող կազմակերպությունները կամ անձինք համապատասխան պայմանագրեր են կնքում սեփականատերերի հետ»:

Հոդված 6. Օրենքի 44-րդ հոդվածում «վերականգնման» բառից հետո լրացնել «,տեղափոխման, փոփոխման» բառերը:

Հոդված 7. *Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթ*

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող է3) կետով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 7-ամսյա ժամկետում:

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Պ-748-20.12.2023,18.03.2024-ԳԿ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածում: Նույն առաջարկը վերաբերում է նաև Նախագծի 4-րդ հոդվածին և 5-րդ հոդվածի 2-րդ մասին:	«վերաշարադրել» բառը փոխարինել «շարադրել» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ Կառավարություն	1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 7-րդ հոդվածի 2-րդ մասում	«անմիջական շրջակայքի» բառերը փոխարինել «տարածքի» բառով, իսկ «վերափոխումն» բառը փոխարինել «փոփոխումն» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածում	«հոդվածի» բառից հետո լրացնել «1-ին մասի» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է

4.	ՀՀ Կառավարություն	նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ ենթակետում	է4) և է5) կետերը և 3-րդ հոդվածի 3-րդ ենթակետով լրացվող ժա1) կետը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 7-րդ հոդվածում	Նախագծում ներառել անցումային դրույթ՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքում փոփոխությունների և լրացումների դեպքում հուշարձանների բնագավառի ենթաօրենսդրական իրավական ակտերում համարժեք փոփոխությունները և լրացումները կատարել 7-ամսյա ժամկետում»:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	Ամբողջ նախագծում	«և» փոխարինել «եւ»-ով:	Ընդունվել է	Ընդունվել է